# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
# ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 522522

« 30 » ապրիլի 2024թ.

№ ԳԲ/34.3-Մ4-9/1772-2024

**«ԱԼԻՍ 1» ՍՊԸ-ի տնօրեն**
**Վարդան Մարգարյանին**

**պատճենը՝ «Էներէքս» ՓԲԸ-ի**
**տնօրեն Գագիկ Մարգարյանին**

Հարգելի պարոն Մարգարյան,

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների պրոֆիլներում ամրագրված սպառման կետերի հզորությունների վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության վերլուծության և այն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից այդ սպառողների համար հաստատված հզորությունների հետ համադրելու արդյունքում արձանագրվել է շուկայի կառավարման ծրագրում Ձեր սպառման կետի մասով ամրագրված հզորության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մոտ գրանցված հզորության տարբերություն:

Միաժամանակ, հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №517-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (ԷՄԱ կանոններ) 50-րդ կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ պայմանագրում, այդ թվում՝ ակցեպտում, փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի հանձնաժողովի կողմից հաստատված և գործող օրինակելի ձևին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

Ելնելով նշվածից՝ «ԱԼԻՍ 1» ՍՊԸ-ի ամրագրված հզորության փոփոխությունը՝ ԷՄԱ կանոններին, ինչպես նաև շուկայի կառավարման ծրագրում «ԱԼԻՍ 1» ՍՊԸ-ի՝ որպես մատակարարի սպառող գրանցումը հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններին համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ հանձնաժողովը 2024 թվականի ապրիլի 30-ից հարուցում է վարչական վարույթ:

Միաժամանակ, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, նույն հոդվածին համապատասխան, անհրաժեշտ է սույն գրությունն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում հանձնաժողով ներկայացնել Ձեր սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման ակտիվ հզորությունը հիմնավորող փաստաթուղթը, ինչպես նաև «ԱԼԻՍ 1» ՍՊԸ-ի պարզաբանումը շուկայի կառավարման ծրագրում ամրագրված հզորությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մոտ գրանցված հզորությունից տարբերվելու վերաբերյալ:

***Գ. Բաղրամյան***

Recoverable Signature

X

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

*Կատարող՝ Զ. Ադամյան ☎ (015) 58-08-08 (358)*

| | | |
|---|---|---|
| Տ Ո Ւ Ր Ք | Վճարված է / Tax perçue | H A Y P O S T |

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԳԲ/34.3-Ս4-9/1772-2024 պ/ռ

L0122497637AM

| ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN | | CN15 |
|---|---|---|
| ☐ Անհայտ/ Unknown | ☐ Մերժված / Refused | |
| ☐ Տեղափոխված/ Gone away | ☑ Չի պահանջվել/ Unclaimed | |
| ☐ Թերի հասցե/ Insufficient address | ☑ 210624 | |
| Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date | | |

«ԱԼԻՍ 1» ՍՊԸ
Armenia ԱՐԱՐԱՏ գ.ԱՐԲԱԹ, 4 փող., 54

YEREVAN
0002
24 JUN 2024
HayPost
2
ARMENIA

Տրման նշանակման օպերատոր / Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

**A.R.**

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

| Առաքանու հասցեատեր/ Addressee of the item | «ԱԼԻՍ 1» ՍՊԸ ԱՐԱՐԱՏ գ.ԱՐԲԱԹ, 4 փող., 54 |
|---|---|

**Առաքանու բնույթը/Nature of the item**

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/ No of item LO122497637AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել / Return to

| | |
|---|---|
| Անուն կամ գրասենյակի անվանում/ Name | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| Փողոց և թիվ/ Street and No | ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002 |
| Բնակավայր և երկիր/ Locality and country | Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ |
| | |

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0122497637AM

**Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination**

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԳԲ/34.3-Մ4-9/1772-2024 պ/ո
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN 0002 24 JUN 2024 HayPost